ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ԲԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՁԵՎԵՐԻ ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅՈՒՆԸ*

Ռ. Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ժամանակակից գրական հայերենում հետաքրքրական հոմանիշություն է առկա բայի գլխավոր և երկրորդական բաղադրյալ ժամանակների միջև։

Հայտնի է, որ գլխավոր ժամանակները ունեն վերլուծական և համադրական կազմություն։ Վերլուծական են այն ժամանակները, որոնք կազմվում են օժանդակ բայի խոնարհված ձևերով և համապատասխան դերբայներով, իսկ համադրական են նրանք, որոնք կազմվում են բայահիմքով և վերջավորությամբ։ Ըստ եղանակների այս ժամանակները գործողությունը դրսևորում են երկու ձևով. առաջին՝ այդ ձևերը ցույց են տալիս բայական գործողություն՝ այն համեմատելով որևէ ժամանակակետի (ներկա և անցյալ) հետ, իսկ երկրորդ դեպքում՝ ժամանակաձևը ցույց է տալիս գործողությունը որևէ ժամանակամիջոցում՝ առանց համեմատության։

Ըստ Մ. Աբեղյանի, առաջինները, բացի ժամանակային գաղափարից, իրենց մեջ ամփոփում են նաև բայական կերպի գաղափար, որը ցույց է տալիս գործողության կատարման վիճակ՝ որևէ ժամանակակետի համեմատությամբ, իսկ երկրորդները զուրկ են այդպիսի հատկանիշներից, ուրեմն և անկերպ են։ Գլխավոր ժամանակներից բայական կերպով են օժտված վերլուծական կազմություն ունեցող (բաղադրյալ) ժամանակաձևերը, իսկ համադրականները (պարզ) անկերպ են[1]*։*

Ի տարբերություն գլխավոր ժամանակաձևերի, բայի երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը կազմությամբ միայն վերլուծական են։ Նրանք կազմվում են լինել *բայի խոնարհված ձևերով և* անկատար *(-իս վերջավորությամբ),* հարակատար *ու* ապառնի *դերբայներով*[2]*։*

Երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի բովանդակությունն այն է, որ նրանք, ի տարբերություն գլխավոր ժամանակաձևերի, բոլորն էլ ցույց են

---

* *Հետազոտությունը կատարված է Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների լեզվական նյութի հիման վրա։*

1 *Մ. Աբեղյանը երկրորդները անվանում է պարզ կերպի ձևեր. տե՛ս «Հայոց լեզվի տեսություն», Երևան, 1965, էջ 557—558։*

2 *Երկրորդական ժամանակների մասին մանրամասն տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 565—600։ Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 300—303, 328—330, 382—388։ Հ. Խ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 163—173։ Գուրգեն Սեմակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 305—317։ Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հատ. 2, Երևան, 1974, էջ 375—420։*

տալիս բայական գործողություն՝ որևէ ժամանակակետի համեմատությամբ։ Այս դեպքում այդ ժամանակակետերը, որոնց նկատմամբ վերցվում է համեմատությունը, երեքն են՝ ներկա, անցյալ և ապառնի։ Այստեղից էլ հիշյալ ժամանակները դրսևորվում են բայական երեք կերպով՝ կատարվող, կատարյալ և կատարելի, ի տարբերություն գլխավոր վերլուծական կազմություն ունեցող ժամանակների, որոնք ունեն կատարվող և կատարելի կերպեր։ Երկրորդական բաղադրյալ ժամանակներից ամեն մեկը դրսևորվում է երեք ձևով, այսինքն՝ յուրաքանչյուր երկրորդական ժամանակաձև ժամանակային իմաստը ցույց է տալիս երեք՝ կատարվող, կատարյալ և կատարելի կերպերով։ Ըստ այդմ էլ, ասենք, վաղակատարի համար մենք ունենում ենք լինել բայի վաղակատարի (ներկա) ձևը հարադրված որևէ բայի անկատար (-իս դերբայական վերջավորությամբ), հարակատար, ապառնի դերբայների հետ և այդ ձևով կազմում սահմանական եղանակի վաղակատար (ներկա) ժամանակը, ասենք, նստելիս եմ եղել, նստած եմ եղել, նստելու եմ եղել և այլն, և այսպես՝ մնացած ժամանակային ձևերը։

Բերվածից երևում է, որ վաղակատար ժամանակը միևնույն ավարտված գործողությունը նշում է անցյալում ընթացքի մեջ գտնվող, մի ուրիշ դեպքում ավարտված վերջացած՝ հետևանքային երանգներով, այլ դեպքում՝ կատարելի վիճակներով։

Ժամանակակից գրական հայերենի երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի հոմանիշությունը ուսումնասիրելիս պարզվում է, որ նրանք հանդես են գալիս երկակի բնույթով։ Առաջինն այն հոմանիշությունն է, որ ցուցաբերում է երկրորդական յուրաքանչյուր ժամանակաձև նույն տերմինով արտահայտվող ժամանակային մյուս ձևերի նկատմամբ։ Այսպիսով, եթե մենք կոնկրետ ձևով թվելու լինենք հոմանիշ այդ շարքերը, ապա կլինեն հետևյալները՝ ներկա ժամանակի ձևերը միմյանց նկատմամբ, անցյալի անկատարինը՝ միմյանց, վաղակատարինը՝ միմյանց, անցյալի վաղակատարինը՝ միմյանց, ըղձականի ապառնիինը՝ միմյանց և այսպես շարունակ։ Օրինակ՝ ըղձական ապառնին ունի հետևյալ ձևերը՝ նստելիս լինեմ, նստած լինեմ, նստելու լինեմ[3]։ Այս կազմություններից ամեն մեկը մյուսի նկատմամբ գտնվում է հոմանիշային հարաբերության մեջ։ Իսկապես, դրանք բոլորն էլ արտահայտում են ըղձական եղանակի ապառնի ժամանակի իմաստ, մի իմաստ, որը նրանց միավորում է հոմանիշային մեկ շարքի մեջ, սակայն այդ ձևերը ցուցաբերում են նաև նրբիմաստային տարբերություններ։ Եթե առաջին ձևը ցույց է տալիս ապառնի ժամանակում գործողությունը ընթացքի՝ անկատար, ապա երկրորդ և երրորդ ձևերը գործողությունը նշում են ավարտված՝ հետևանքային և կատարելի վիճակներով, որոնք էլ հենց նրանց նրբիմաստային տարբերություններն են։

Երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերից հոմանիշային շարք են կազմում նաև սահմանական, ըղձական, պայմանական ու հարկադրական եղանակների անկատար դերբայով կազմվող ապառնի ժամանակաձևերը միմյանց, հարակատար, կատարելի դերբայներով կազմվածները՝ համապատասխանաբար միմյանց նկատմամբ։ Այս դեպքում արդեն համապատասխան այդ ձևերը միավորվում են ժամանակային և կերպային իմաստների ընդհանրու-

3 Բերվում են միայն եզակի թվի առաջին դեմքի ձևերը։

թյամբ, տարբերվում՝ եղանակներով, ինչպես՝ գնալիս եմ լինելու, գնալիս լինեմ, գնալիս կլինեմ, գնալիս պիտի լինեմ և այլ ձևերում։

Երկրորդ տիպի հոմանիշությունն առկա է միևնույն եղանակի նույն տերմինով արտահայտվող երկրորդական բաղադրյալ և գլխավոր ժամանակաձևերի միջև։ Այսպես, միմյանց նկատմամբ հոմանիշ են մի կողմից՝ գնացել եմ սահմանականի վաղակատար, գլխավոր ժամանակի ձևը, մյուս կողմից՝ գնալիս եմ եղել, գնացած եմ եղել, գնալու եմ եղել ձևերը։ Այս ձևերի ընդհանրությունն այն է, որ բոլորն էլ նույն եղանակի նույն ժամանակի ձևերն են, սակայն այդ ընդհանրության պայմաններում նրանք նրբիմաստային զգալի տարբերություններ ունեն։ Գնացել եմ գլխավոր ժամանակային ձևը կատարյալ կերպի բայ է և դրանով տարբերվում է երկրորդական բաղադրյալ ժամանակի կատարվող և կատարելի կերպերով արտահայտված գնալիս եմ եղել, գնալու եմ եղել ձևերից, իսկ կատարյալ կերպի հետ հիշյալ ձևը ընդհանրություն է ցուցաբերում, և թվում է այնտեղ նրբիմաստային տարբերություն տեսնելը անհնարին է, որովհետև երկուսն էլ կատարյալ կերպի են։ Սակայն հենց այդտեղ էլ պետք է փնտրել այդ ձևերի և՛ ընդհանրությունը, և՛ նրբիմաստային տարբերությունները։ Այս դեպքում երկրորդական ժամանակաձևերի մեջ, ի տարբերություն գլխավորների, կերպի կատեգորիան ավելի է ընդգծվում, ավելի ցայտուն է արտահայտվում (հմմտ. գրել եմ և գրած եմ եղել)։ Այս առիթով Ա. Աբրահամյանը երկրորդական ժամանակաձևերի կազմության մասին գրում է. «Բոլոր այն ձևերում, որտեղ «լինել» բայը հանդես է գալիս բաղադրյալ ձևով (եմ լինում..., եմ լինելու..., եմ եղել..., էի լինում..., էի լինելու..., էի եղել), վիճակի կատեգորիան կրկնակի է դառնում»[4]։

Նույն եղանակի նույն ժամանակի գլխավոր և երկրորդական բաղադրյալ ժամանակները իրար հարաբերակից են և սովորաբար օգտագործվում են միմյանց հետ, հմմտ. «Մինչ նա գալիս էր, ես գնալիս էի լինում (գնացած էի լինում, գնալու էի լինում)։

Հետաքրքրական է մի երևույթ ևս. սահմանական եղանակի երկրորդական բաղադրյալ ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերը հոմանիշություն են ցուցաբերում ոչ միայն սահմանականի գլխավոր ժամանակաձևերի, այլև ըղձական, պայմանական, հարկադրական եղանակների ապառնի և անցյալի ապառնի գլխավոր համապատասխան ժամանակաձևերի հետ։ Այսպես, մի կողմից իրար հոմանիշ են գլխավոր գնալու եմ||գնամ||կգնամ||պիտի գնամ ձևերը, մյուս կողմից էլ սրանք հոմանիշ են գնալիս եմ լինելու||գնացած եմ լինելու||գնալու եմ լինելու||գնալիս լինեմ||գնացած լինեմ||գնալու լինեմ||գնալիս կլինեմ||գնացած լինեմ||գնալու կլինեմ||գնալիս պիտի լինեմ||գնացած պիտի լինեմ||գնալու պիտի լինեմ ձևերին։

Երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը տարածված են հիմնականում Հ. Թումանյանի արձակ ստեղծագործություններում, մասնավորապես՝ հեքիաթներում։ Սրա պատճառն այն է, որ այս ժամանակաձևերը հաճախ արտահայտում են այնպիսի գործողություններ, որոնք պատմողը ներկայացնում է իբրև ոչ ականատես[5]։

---

[4] Ա. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 302։
[5] Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 165։

Թումանյանի ստեղծագործության մեջ երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերից առանձնապես տարածված է սահմանական եղանակի կատարյալ կերպի ներկա ժամանակաձևը։ Մեր ընտրած հիսունվեց օրինակներից քսաներեքը այդպիսին են, տասնութը նույն եղանակի կատարվող կերպի բայաձևեր են, մնացածները բաշխվում են այն եղանակների շրջանակներում, որոնց մեջ իշխողը դարձյալ կատարյալ կերպի բայաձևերն են։ Սրա պատճառը պարզ է. հեքիաթներն ավարտված, վերջացած դեպքերի, եղելությունների մասին են պատմում։

Սահմանական եղանակի կատարյալ կերպի ներկայով ընտրված բոլոր օրինակներում հեղինակը բայական գործողությունները ներկայացնում է իբրև ոչ ականատես, իբրև ուրիշից լսած գործողություններ։ Այսպիսի պայմաններում, բնականաբար, հեղինակը չէր կարող օգտվել սահմանական եղանակի գլխավոր ժամանակաձևերից, որոնք ցույց են տալիս ականատեսի կողմից դիտված գործողություններ, ուստի նա նախապատվություն է տվել երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերին։ Բերենք համապատասխան օրինակներ. «Մի օր էլ շնմբումը նստած է լինում, տեսնում է մի մարդ վռազ-վռազ փողոցով անց է կենում» (3, 196)[6], «Աղջիկն արդեն Արագարծի ստորոտն է լինում հասած» (3, 213), «Դու մի ասիլ հարբած հարսանքավորների տարածած լուրը սրանց էլ է լինում հասած» (2, 221), «Եվ ամեն բան կատարվում է էնպես, ինչպես գուշակած է լինում Անլեզու աղջկանը արհեստական լեզու տվող կախարդը» (3, 298), «Օր ու գիշեր գնում է Վասիլիսան, մին էլ մյուս օրվա իրիկունը դուրս է գալիս էն բացատը, որտեղ կանգնած է լինում Կախարդ պառավի խրճիթը» (3, 302), «Երիտասարդը իր օրումը լսած չի լինում, թե ինչ բան է կյանքի ծառը կամ որտեղ է բուսնում» (3, 391) և այլն։

Այս օրինակներում հեղինակը գործողությունները ներկայացրել է իբրև ոչ ականատես, այլապես՝ ընդգծված բայաձևերը համապատասխանաբար կլինեին նստած էր, խոսել էր, գուշակել էր, կանգնած էր, չէր լսել տեսքով, որոնք ցայտուն կերպով երևում են հետևյալ օրինակներում, որտեղ բայաձևերը արտահայտված են սահմանական եղանակի համապատասխան գլխավոր ժամանակային ձևերով. «Կանգնած է դեռ ու շողին Հով է տալիս մշակին» (1, 24), «Շատ եմ տեսել» (1, 28), «Թաց տրեխները հանել է, Ռեռել» (1, 30), «Քնած է արդեն հովտում ողջ գյուղը» (2, 9) և այլն։ Բերված օրինակներում բայական ձևերը ցույց են տալիս ստույգ կերպով կատարված գործողություններ, որոնք հեղինակը ներկայացրել է իբրև ականատես։ Հենց դրանով էլ հիմնավորվում են հեղինակի կողմից սահմանական եղանակի գլխավոր և երկրորդական համապատասխան ժամանակաձևերի օգտագործման տարբերությունները, բացի դրանից երկրորդական բաղադրյալ ժամանակային ձևերով կազմված օրինակներում ավելի ընդգծված է ներկայացվում բայական կերպի գաղափարը, որով էլ պայմանավորված է գլխավոր և երկրորդական հոմանիշ ժամանակաձևերից երկրորդականներին տրված նախապատվությունը։

Հետաքրքրական է, որ հոմանիշ այդ ձևերը միմյանց նկատմամբ ցուցաբերում են նաև ոճական տարբերություններ. երկրորդական բաղադրյալ ժա-

---

6 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 1—4, Երեան, 1969։ Այսուհետև և այսուհետև տեքստում փակագծերի մեջ նշված առաջին թվանշանը ցույց է տալիս հատորը, իսկ երկրորդը՝ համապատասխան էջը։

մանակաձևերը ավելի շատ տարածված են բանավոր խոսքում և խոսակցական բնույթ ունեն, որը միանգամայն համապատասխանում է հեքիաթում պատմվող ոճին։ Ինչպես, «Դու մի ասիլ՝ հնուց էդ պատում գանձ է եղել պահած» (3, 178), «...Ով սրա վրա դա, իմացած կենա, որ ինձ հետ է գործ ունենալու» (3, 355), «Ասում են սրանից հետը՝ մի անգամ էլ կարմրիկը երբ որ իր տատի համար թխվածք է եղել տանելիս, մի ուրիշ գել է ուզեցել նրան համոզի...» (3, 376) և այլ օրինակներում ընդգծված ձևերը խոսակցական բնույթ ունեն, իսկ երկրորդ օրինակում լինել բայի փոխարեն օգտագործված է կենալ ձևը, որը ավելի է ընդգծում ասելիքի խոսակցական լինելը, այդ նույն ձևով նաև՝ Թագավորն ապրած կենա տարածված արտահայտության մեջ։

Երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերով հեղինակը հաճախ արտահայտում է նաև մշտապես առկա, հարատևող գործողություններ, որոնցում նշվող իմաստները, ի տարբերություն գլխավոր զուգահեռ ժամանակաձևերի, ավելի ընդգծված են ներկայացվում։ Օրինակ. «Մի պատռված քուրք հագին, մի ալրոտ փոստալ գլխին ապրելիս է լինում գետի ափին, իր կիսավեր ջաղացումը» (3, 167), «Հևը անչափ սիրելիս է լինում իր աղջկանը» (3, 211), «Լինում է չի լինում մի վաճառական, տասներկու տարվա պսակված է լինում...» (3, 299), «Ընակատեղն էլ չորս կողմից շրջապատված է լինում անտառով...» (3, 340) և այլն։ Ասվածը ավելի ակնառու կլինի, եթե բերված օրինակներում նշված ձևերը համեմատենք գլխավոր ժամանակաձևերի հետ։ Այսպես. «Իրենց ուսերին, Ջավախքից էլ վեր Բրոնած պահում են մի ուրիշ աշխարհ» (1, 250), «Լինում է մի սար» (1, 269) և այլն։ Ընդգծված բայական ձևերը մշտապես հարատևող գործողությունները այն խստությամբ չեն դրսևորում, ինչ որ երկրորդական բաղադրյալ ժամանակային ձևերը։

Երկրորդական բաղադրյալ ժամանակային ձևերի օգտագործումով հեղինակը շատ հաճախ աշխատում է նաև շեշտած, ընդգծած լինել բազմապատիկ անգամ կրկնվող գործողությունների հաճախականությունը[8]։

Այսպես, «Ժամ ենք գնում ամեն օր» (1, 23), «Ու ման է գալի սարերը ընկած Սարոն փախցրած աղջիկի նման» (1, 93) և այլ օրինակներում սահմանական եղանակի ընդգծված գլխավոր ժամանակաձևերը ցույց են տալիս բազմապատիկ անգամ կրկնվող գործողություններ, բայց դրանց կողքին, այլ օրինակներում, ինչպես «Էս մարդ ու կնիկը իրար հավանելիս չեն լինում։ Մարդը կնկան է ասում հիմար, կնիկը մարդուն, ու միշտ կռվելիս են լինում» (3, 196), «Պալատականներն ու նախարարները, որոնք ամեն օր խոսելիս են լինում Թագավորի հետ, կարճ ժամանակում ամենքն էլ խլանում են» (3, 291), «Պղինձն էլ էնպես մաքուր սրբած էր լինում, որ ոսկու նման պսպղում էր» (3, 333), «Կողքներին պառկած էր լինում իրենց գառը» (3, 33) և այլն, բայական նույն տիպի գործողությունները դրսևորվել են երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերով, որի հետևանքով կրկնվող գործողությունների հաճախականությունը ավելի է շեշտվել, ընդգծվել, դրանով էլ պայմանավորվել է գլխավոր ժամանակաձևի նկատմամբ նրան հոմանիշ երկրորդական բաղադրյալ ժամանակային ձևի գերապատվությունը։

7 Հմմտ. Ա. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 386։
8 Հմմտ. Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 164։

Այսպիսով, բայի եղանակային ձևերի համակարգում հետաքրքրական հոմանիշություն են ցուցաբերում գլխավոր և երկրորդական բաղադրյալ ժամանակային ձևերը։ Այդ հոմանիշությունը դրսևորվում է երկկերպ. առաջինն այն է, որն առկա է երկրորդական, իսկ մյուսը՝ երկրորդական ու գլխավոր ժամանակային ձևերի համակարգում՝ համապատասխան իմաստային ընդհանրություններով ու նրբիմաստային տարբերություններով։

СИНОНИМИЧНОСТЬ ГЛАВНЫХ И ВТОРИЧНЫХ ВРЕМЕННЫХ ФОРМ ГЛАГОЛА

Р. Г. АВЕТИСЯН

(Резюме)

В системе наклонений глагола представляет особый интерес синонимичность главных и вторичных временных форм глагола. Синонимичность выражается двояко: в системе вторичных и в главных и вторичных временных формах глагола с соответствующими общими и различительными нюансами значения. Вторичные временные формы употребляются в прозе Ов. Туманяна, в частности в сказках, а главные временные формы—в его поэзии. Преобладание вторичных временных форм над главными—особый творческий прием, с помощью которого писатель выражал дух народного языка.